ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1920-Ա « 19 » մայիսի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ «ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ» ՄԱՆԿԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏԵՂԱԲԱՇԽՎԱԾ ՀԱՍԱՐԱԿ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՓՈԽԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ «ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի՝

1. Հաստատել Երևանի «Մալաթիա-Սեբաստիա» մանկական առողջության կենտրոն փակ բաժնետիրական ընկերության կողմից տեղաբաշխված հասարակ անվանական բաժնետոմսերի փոխարկման արդյունքները «Մալաթիա-Սեբաստիա առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի, այն է՝ Երևանի «Մալաթիա-Սեբաստիա» մանկական առողջության կենտրոն փակ բաժնետիրական ընկերության կողմից տեղաբաշխված թվով 126 հատ 5,239 դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) անվանական ոչ փաստաթղթային բաժնետոմսերը փոխարկվում են «Մալաթիա-Սեբաստիա առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից թողարկված թվով 40 հատ 10,000 դրամ անվանական արժեքով հասարակ անվանական բաժնետոմսերի:

2. Միացման ճանապարհով վերակազմակերպված (ընդլայնված) «Մալաթիա-Սեբաստիա առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի մեծությունը հաստատել 8,160,000 (ութ միլիոն

հարյուր վաթսուն հազար) դրամ՝ 10,000 դրամ անվանական արժեքով 816 հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ